# ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ինչպես արդեն հաղորդել ենք, 1998 թ. սեպտեմբերի 22-ին, Միացյալ Նահանգներ կատարած իր առաջին ուղևորությունից վերադառնալուց և մեկ ամիս Մայր Աթոռ Ս. Էջմիածնում մնալուց հետո, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Վեհափառ Հայրապետը կրկին մեկնեց ԱՄՆ՝ Մեծի Տանն Կիլիկիո Արամ Ա Կաթողիկոսի և ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանի գլխավորած ՀՀ պաշտոնական պատվիրակության հետ մասնակցելու Միացյալ Հայկական Ֆոնդի 100-րդ թռիչքի առթիվ կազմակերպված հանդիսությանը:

Հանդիսության ավարտից հետո Վեհափառ Հայրապետը շարունակեց մնալ Միացյալ Նահանգներում՝ բժշկական նոր քննության համար, և երկու վիրահատությունների ենթարկվեց:

Այս ընթացքում Վեհափառ Հայրապետին, վիրահատության առիթով, շուտափույթ ապաքինման ու կազդուրման մաղթանքներ հղեցին Մեծի Տանն Կիլիկիո Արամ Ա Կաթողիկոսը, Երուսաղեմի Հայոց Պատրիարք Տ. Թորգոմ արքեպս. Մանուկյանը, Կոստանդնուպոլսո Հայոց Պատրիարք Տ. Մեսրոպ արքեպս. Մութաֆյանը, Վատիկանից՝ Կաթոլիկ եկեղեցու պետ Ն. Ս. Հովհաննես-Պողոս Բ Պապը, Ռուս Ուղղափառ եկեղեցու պետ Ն. Ս. Ալեքսիյ Բ Պատրիարքը, ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանը և այլոք:

Վեհափառ Հայրապետը, հակառակ առողջական վիճակին, ԱՄՆ-ում շարունակեց իր գործուն մասնակցությունը բերել եկեղեցական կյանքին: Մի շարք օրհնության գրեր ու կոնդակներ հղեց հայ և օտարազգի հոգևորականների, հասարակական-քաղաքական գործիչների և ազգային բարերարների, Նյու Յորքում հանդիպեց Ղպտի եկեղեցու պետ Շենուդա Գ Պատրիարքի հետ: Հանդիպման ընթացքում Հովվապետերը արձանագրեցին էկումենիկ շարժման ոլորտում երկու պատմական եկեղեցիների ծեռք բերած նվաճումները:

Հավարտ վիրահատության որոշ ժամանակ Միացյալ Նահանգներում ապաքինման շրջան անցկացնելուց հետո, Վեհափառ Հայրապետը մեկնեց Լոնդոն, որտեղից մարտի 23-ին ժամանեց Վատիկան՝ Ն. Ս. Հովհաննես-Պողոս Բ Պապի և ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանի հետ նախագահելու տեղի թանգարանի Սիքստինյան սրահում Հայոց մկրտության 1700-ամյակին նվիրված «Հռոմ-Հայաստան» ցուցահանդեսի բացմանը:

Ապա Նորին Սրբությունը վերստին մեկնեց Լոնդոն, այնուհետև հատուկ չվերթով մարտի 29-ին ժամանեց Մայր Աթոռ Ս. Էջմիածին, որտեղ Վեհափառ Հայրապետը շարունակելու է անցկացնել իր ապաքինման շրջանը:

Շուտափույթ կազդուրում և ապաքինման բարի մաղթանքներ Հայոց Հայրապետին: